



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2655
Ապրիլ 11, 1997

Արժանաշնորհ
Տ. Աւետ Բհնյ. Թէրզեան
Հովիւ Ս. Փրկիչ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուստըր

Սիրելի Տէր Աւետ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 9, 1997 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 16, 1997-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Վահէ Ծարտարեան
Էտուրրտ Բաշաճեան
Հարրի Տոթորեան
Փաթրիշիա Առաքելեան
Էլիզապէթ Աւագեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք Թեմական Կանոնադրութեան բարեփոխուած թիւ 14Զ յօդուածը, որուն համաձայն «Ընտրել Հաշուեքննիչ Յանձնախումբ մը երեք հոգիներէ բաղկացած: Իւրաքանչիւր անդամ պիտի ծառայէ երեք տարի, մէկ անդամը պիտի ընտրուի երեք տարուան համար, մէկ անդամը՝ երկու տարուան համար եւ մէկ անդամը՝ մէկ տարուան համար: Մինչեւ որ պաշտօնավարութեան շրջանը վերջանայ՝ պաշտօնները երեք տարուան շրջանի կը վերածուին»: Այս յօդուածին տրամադրութիւնը պարտին յարգել մեր թեմի բոլոր համայնքները:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաչագոյ Արք. Դրաստիս

ԽԱՇԱԿ ԱՐԿ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ